



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Երևան, Կառավարական փուն 1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 03/03

(«Բրենդլիդեր» ՀՁ ՍՊ ընկերության 13.02.2018թ.-ի վարչական բողոքը
բավարարելու մասին)

Ք. ԵՐԵՎԱՆ

«16» ՄԱՐՏԻ 2018թ.

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ նախագահությամբ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 2018թ. հունվարի 26-ի թիվ 5/4 որոշման վերաբերյալ «Բրենդլիդեր» ՀՁ ՍՊ ընկերության 13.02.2018թ.-ի վարչական բողոքը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.

«Բրենդլիդեր» ՀՁ ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Ընկերություն կամ Բողոք բերած անձ)՝ ի դեմս Ընկերության տնօրեն Անդրանիկ Մուրադյանի, բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Գանգատարկման հանձնաժողով) 26.01.2018թ.-ի թիվ 5/4 որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 13.02.2018թ.-ին:

Բողոք բերած անձը հայտնել է, որ Ընկերությունը մոտ 15 տարի զբաղվում է սննդամթերքի ներմուծմամբ և դրանց մեծածախ վաճառքով՝ հանդիսանալով խոշոր հարկատու: Ընկերությունը հավի միս և խոզի բուլդ էր պատվիրել Ռուսաստանի Դաշնությունում գործող «МИРАТОРГ» մատակարար ընկերությունից (այսուհետ՝ նաև

Մատակարար), որոնք բեռնվել են Մոսկվա քաղաքում: Մատակարարի կողմից տրվել է թիվ 1499659BД առ 25.10.2017թ. հաշիվ-ապրանքագիրը (այսուհետ՝ նաև Ապրանքագիր) և բեռնագիր, որոնց համաձայն պետք է առաքվեր 21383,62 կգ նետտո քաշով, 22049,67 կգ բրուտտո քաշով, 2.089.269,47 ՌԴ ռուբլի հաշիվ ապրանքագրային արժեքով հավի միս և խոզի բուրդ:

Ըստ Բողոք բերած անձի՝ մատակարարվող ապրանքները բեռնվել են մատակարար ընկերության պահեստում՝ Ընկերության գործընկեր «ՍՊԱՅԿԱ» ՍՊԸ-ին պատկանող «Volvo» մակնիշի «763 LP 61/199 L 01» հաշվառման համարանիշի ավտոմեքենան (այսուհետ՝ նաև Ավտոմեքենա) և առաքվել Հայաստանի Հանրապետություն: 2017թ. հոկտեմբերի 27-ին «ՍՊԱՅԿԱ» ՍՊԸ-ի աշխատակից Հովհաննես Թովմասյանի (այսուհետ՝ նաև Վարորդ) կողմից վարվող ավտոմեքենան մուտք է գործել Վերին Լարսի մաքսային կետ, որտեղ Վարորդը ՌԴ մաքսային ծառայության աշխատակիցներին է ներկայացրել իր կողմից Ընկերության անվամբ փոխադրվող հավի մսի և խոզի բրդի ուղեկցող բոլոր փաստաթղթերը, որոնց հիման վրա մաքսային ծառայության աշխատակիցը լրացրել է թիվ 10803040/27/1017/0066428 տարանցման հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր), որը Վարորդը ստորագրել և ստացել է:

Ավտոմեքենան 28.10.2017թ. մուտք է գործել Բագրատաշենի մաքսային կետ, որտեղ մաքսային ծառայության աշխատակիցներին է ներկայացվել Հայտարարագիրը: Մաքսային ծառայության աշխատակցի կողմից ստուգվել են բոլոր փաստաթղթերը, ինչից հետո Ավտոմեքենան կշռվել է և ուղարկվել «ՈՒՐԲԱՆ ԼՈՋԻՍՏԻՔ ՍԵՐՎԻՍԻՍ ՏԵՐՄԻՆԱԼ» մաքսային հսկողության տարածք (այսուհետ՝ նաև Մաքսային հսկողության տարածք): Նշված տարածքում զննությամբ պարզվել է, որ Ընկերության անունով ուղարկված 1.755 կգ խոզի բուրդը ներառված չի եղել Հայտարարագրում:

Ըստ Բողոք բերած անձի Հայտարարագրով երկու ապրանքային դիրքում հայտարարագրվել է հավի միս, իսկ փաստացի առկա 1750,5 կգ բրուտտո, 1691,62 նետտո քաշով խոզի բուրդը չի հայտարարագրվել այն պատճառով, որ Մատակարարի կողմից տրված Ապրանքագրի 4-րդ տողում առկա է «РОССИЯ» անվանում «Окорок свиной» անվանման փոխարեն, որը վրիպակ է, ինչի վերաբերյալ Մատակարարի կողմից Ընկերությունը ստացել է պարզաբանում: Փաստացի առկա 1750,5 կգ բրուտտո, 1691,62 նետտո քաշով խոզի բրդի

չհայտարարագրման փաստով 01.11.2017թ. Մաքսային տարածքի նախաբացթողումային հսկողության վարչության մաքսային տեսուչի կողմից կազմվել է արձանագրություն Հովհաննես Թովմասյանի գործողություններում ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածով նախատեսված կանոնների խախտման հատկանիշների առկայության վերաբերյալ:

Ընկերության տնօրեն Անդրանիկ Մուրադյանը 07.11.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության (այսուհետ՝ նաև Վարչություն) վարչական վարույթի իրականացման բաժնում տվել է բացատրություն այն մասին, որ դա թյուրիմացության արդյունք է, որևէ դիտավորություն առկա չի եղել թաքցնելու առաքված ապրանքը, քանի որ Ապրանքագրում առկա է եղել վրիպակ, իսկ բեռն ուղեկցող մնացած փաստաթղթերում առկա է եղել ճիշտ անվանումը, մասնավորապես՝ բեռնագրում և անասնաբուժական սերտիֆիկատում (սերիա RU 50 N 00028990 առ 25.10.2017թ.):

Վարչության վարչական վարույթի իրականացման բաժնի մաքսային տեսուչ Ս. Թամեյանը Վարորդից վերցրել է բացատրություն այն մասին, որ Հովհաննես Թովմասյանը 27.10.2017թ. հոկտեմբերի 27-ին մուտք է գործել Վերին Լարսի մաքսային կետ, որտեղ ՌԴ աշխատակիցներին է ներկայացրել իր կողմից Ընկերության անվամբ փոխադրվող հավի մսի և խոզի բրդի ուղեկցող բոլոր փաստաթղթերը, մաքսային ծառայության աշխատակիցը իրեն զգուշացրել է, որ Ապրանքագրում առկա է «РОССИЯ» անվանումը «Окорок свиной» անվանման փոխարեն, իսկ միջազգային բեռնագրում նշված է հավի բուդ, որոնք իր կարծիքով վրիպակ է, սակայն այդ փաստաթղթերի հիման վրա մաքսային ծառայության աշխատակիցը լրացրել է Հայտարարագիրը, որը ստորագրել և ստացել է:

Բացի այդ, 06.12.2017թ. ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, պարզվել է, որ դեռևս վարչական վարույթի ընթացքում մինչև վարույթ իրականացնող մարմնի կողմից վարչական տույժ նշանակելու մասին որոշում կայացնելը, 10.11.2017թ. Վարչության պետ Ս. Սինանյանի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության պետ Գ. Սաղոյանին ուղարկվել է թիվ 13-2/[1525132]-17 գրությունը՝ խնդրելով թույլատրել Ընկերությանը Մաքսային հսկողության տարածքում գտնվող 1755 կգ ընդհանուր քաշով խոզի բուդը հայտարարագրել որպես ոչ ԵՏՄ անդամ երկրի ապրանք Արարատյան մաքսատուն-վարչությունում, որից հետո սահմանված կարգով բաց թողնել:

Ի պատասխան Վարչության պետ Ս. Սինանյանի 10.11.2017թ. թիվ 13-2/[1525132]-17 գրության ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Ս. Ավետիքյանի կողմից 10.11.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ ՆՀՎ պետ, մ/ծ գնդապետ Գ. Մովսիսյանին և ՀՀ ԿԱ ՊԵԿ ԱՏՄ պետ, մ/ծ փոխգնդապետ Ա. Սարգսյանին ուղարկվել է թիվ 8-3/[1525298]-17 գրությունը (այսուհետ՝ Վարչական ակտ) այն մասին, որ հանձնարարվում է թույլատրել Ընկերությանը Մաքսային հսկողության տարածքում գտնվող 1755 կգ ընդհանուր քաշով խոզի բուդը հայտարարագրել որպես ոչ ԵՏՄ անդամ երկրի ապրանք Արարատյան մաքսատուն-վարչությունում, որից հետո սահմանված կարգով բաց թողնել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Ս. Ավետիքյանի թիվ 8-3/[1525298]-17 գրությունը որպես վարչական ակտ անվավեր ճանաչելու և 1.755 կգ ընդհանուր քաշով խոզի բուդը որպես ԵԱՏՄ ապրանք բաց թողնելու համար 14.12.2017թ. գանգատ է ներկայացվել Գանգատարկման հանձնաժողով, որի 26 հունվարի 2018թ. թիվ 5/4 որոշմամբ գանգատը մերժվել է:

Բողոք բերած անձը պնդում է, որ Գանգատարկման հանձնաժողովի թիվ 5/4 որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է և անհրաժեշտ է ճանաչել անվավեր՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Ըստ Բողոք բերած անձի՝ Գանգատարկման հանձնաժողովը խախտել է այս իրավանորմի պահանջները, չի ապահովել գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, չի անդրադարձել Ընկերության կողմից ներկայացված բոլոր փաստարկներին՝ դրանով իսկ կոպտորեն խախտելով տնտեսավարող սուբյեկտի իրավունքներն ու օրինական շահերը:

Այսպես, Որոշման պատճառաբանական մասում Գանգատարկման հանձնաժողովը, որպես ներկայացված բողոք - գանգատի մերժման հիմք նշել է Հայաստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի

հավելված 5-ով սահմանված արձանագրության 5-րդ կետը:

Հավելված 5-ը վերաբերում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք չհանդիսացող տարածքներով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման առանձնահատկություններին, որի 5-րդ կետի համաձայն՝ *«Օտարերկրյա պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքից դեպի Միության մաքսային տարածք «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան տեղափոխման դեպքում Եվրասիական տնտեսական միության ապրանքները պահպանում են Եվրասիական տնտեսական միության ապրանքների կարգավիճակը»*: Բողոք բերած անձը պնդում է, որ այս կետում ոչ մի խոսք չկա այն մասին, որ եթե առաքվող ապրանքը չես հայտարարագրում, ապա այն դառնում է երրորդ երկրից բերված ապրանք և այն պետք է հայտարարագրել ընդհանուր կարգով «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

Որպես հիմնավորում՝ Գանգատարկման հանձնաժողովը նշել է նաև, որ «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009թ. նոյեմբերի 27-ի պայմանագրի անբաժանելի մաս համարվող Մաքսային Միության մաքսային օրենսգրքի **(այսուհետ՝ նաև Օրենսգիրք)** 4-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ Մաքսային միության ապրանքներ չհանդիսացող ապրանքները համարվում են օտարերկրյա ապրանքներ, մասնավորապես՝ եթե ապրանքները Միության մաքսային տարածքից Միության անդամ չհանդիսացող պետության տարածքով Միության մաքսային տարածք են տեղափոխվում առանց «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի ձևակերպման:

Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ օտարերկրյա ապրանքներն այն ապրանքներն են, որոնք Մաքսային միության ապրանքներ չհանդիսացող ապրանքներ են, ինչպես նաև այն ապրանքները, որոնք նշված օրենսգրքին համապատասխան ստացել են օտարերկրյա ապրանքների կարգավիճակ: Այսինքն, ըստ Բողոք բերած անձի, սույն հասկացության վերլուծությունից երևում է, որ որպեսզի ապրանքները ձևակերպվեն որպես ոչ ԵՏՄ երկրի ապրանք՝

1) պետք է հանդիսանան Մաքսային միության ապրանք չհանդիսացող ապրանք, որն Ընկերության պարագայում միանշանակ բացառվում է, քանի որ բոլոր

փաստաթղթերը հավաստում են այն փաստը, որ խոզի բուղը արտադրված է Ռուսաստանի Դաշնությունում,

2) Օրենսգրքի համաձայն պետք է ձեռք բերած լինեն օտարերկրյա ապրանքի կարգավիճակ, որը նույնպես չի իրականացվել:

Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ ենթակետի համաձայն, Մաքսային միության ապրանքներ են Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող ապրանքները, որոնք՝

- ամբողջությամբ արտադրվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում (Ընկերության պարագայում խոզի բուղը արտադրված է Ռուսաստանի Դաշնությունում, ինչի մասին վկայում են ուղարկված փաստաթղթերը և ապրանքի փաթեթավորումը),

- ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք և ստացել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ սույն Օրենսգրքին և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան,

- պատրաստվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում սույն ենթակետի երկրորդ և երրորդ պարբերություններում նշված ապրանքներից և (կամ) օտարերկրյա ապրանքներից և սույն Օրենսգրքին և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան ձեռք են բերել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ:

Բացի այդ, Գանգատարկման հանձնաժողովը Որոշման պատճառաբանական մասում նշել է, որ քննարկվող դեպքում Հայտարարագրով, ինչպես նաև 25.10.2017թ. N 536439 միջազգային ապրանքատրանսպորտային բեռնագրում (CMR) 1750,5 բրուտտո, 1691,62 նետտո քաշով խոզի բուղը սահմանված կարգով չի հայտարարագրվել, հետևաբար այն որպես ԵՏՄ անդամ երկրի ապրանք չի կարող հայտարարագրվել:

Ըստ Բողոք բերած անձի՝ պատճառաբանական մասում նշված իր դիրքորոշմամբ Գանգատարկման հանձնաժողովը կամայականորեն ամբողջությամբ փոփոխել է ԵԱՏՄ և ՀՀ օրենսդրության համապատասխան իրավանորմերի իմաստն ու նշանակությունը, դրանով իսկ կայացնելով գործի փաստական հանգամանքներից ու ՀՀ օրենսդրությունից չբխող վարչական ակտ:

Գանգատարկման հանձնաժողովը ուշադրություն չի դարձրել այն հանգամանքին, որ Ընկերության կողմից կատարված են եղել ապրանքների հայտարարագրման համար նախատեսված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի ներկայացումը (բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են Գանգատարկման հանձնաժողովին), որում առկա տեղեկությունները չեն ներառվել Հայտարարագրում Վերին Լարսի մաքսային անցակետի աշխատակցի և Վարորդի մեղքով, որի համար Հովհաննես Թովմասյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության, հետևաբար վարչական ակտով չէր կարող Ընկերությանը ծանրաբեռնել լրացուցիչ մաքսատուրք վճարելու պարտականությամբ և մերժել ապրանքի բացթողումը որպես ԵԱՏՄ կարգավիճակ ունեցող ապրանք, այն պարագայում, երբ ներկայացված փաստաթղթերում ակնհայտ երևում է, որ այն ԵԱՏՄ ապրանք է հանդիսանում:

Բացի այդ, Գանգատարկման հանձնաժողովի նման դիրքորոշման պարագայում բաց է մնում հետևյալ հարցը՝ ի՞նչ պետք է անել Հայտարարագրում 1750,5 բրուտտո, 1691,62 նետտո քաշով խոզի բրդի փոխարեն նշված հավի մսի հետ:

Ամփոփելով վերոնշարադրյալը Բողոք բերած անձը եզրահանգում է, որ Գանգատարկման հանձնաժողովի կողմից կիրառված նորմատիվ իրավական ակտերի համապատասխան դրույթներից չի հետևում, որ չհայտարարագրման դեպքում ապրանքը պետք է ձևակերպվի որպես երրորդ երկրի ապրանք:

Վերոգրյալի հիման վրա Բողոք բերած անձը խնդրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1 -ին կետի «ա» ենթակետի հիմքով անվավեր ճանաչել Գանգատարկման հանձնաժողովի 2018թ. հունվարի 26-ի թիվ 5/4 որոշումը:

2. Մասնակցի դիրքորոշումը.

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2018թ.-ի մարտի 16-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էր Ընկերության ներկայացուցիչ Սամվել Ալեքսանյանը:

Վերջինս լսումների ընթացքում պնդեց բողոքի հիմքերը և հիմնավորումները:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում

գտնում ենք, որ սույն բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

3.1. ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետը 10.11.2017թ. Մաքսային հսկողության վարչության պետին ուղարկել է թիվ 13-2/[1525132]-17 գրությունը՝ հետևյալ բովանդակությամբ՝ «2017թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցների կողմից «Ուրբան Լոջիստիք Սերվիսիս Տերմինալ» ՍՊ ընկերության մաքսային հսկողության տարածքում զննության է ենթարկվել 27.10.2017թ. 10803040/271017/0066428 տարանցման հայտարարագրով, «Բրենդ-Լիդեր» ՀՁ ՍՊ ընկերության անվամբ ՌԴ-ից ՀՀ բեռներ տեղափոխած Հովհաննես Թովմասյանի կողմից շահագործվող «Volvo» մակնիշի, 763LP61/199L01 պերիամարանիշի ավտոմեքենան և պարզել, որ բեռնախցիկում առկա է 1755 կգ ընդհանուր քաշով չհայտարարագրված խոզի բուրդ:

Փաստի առթիվ Հովհաննես Թովմասյանի նկատմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի հատկանիշներով կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն և իրականացվում է վարչական վարույթ:

Նկատի ունենալով, որ իրավախախտման անմիջական օբյեկտ հանդիսացող 1755 կգ ընդհանուր քաշով խոզի բուրդը արագ փչացող ապրանք է, ուստի խնդրում եմ թույլատրել «Բրենդ-Լիդեր» ՀՁ ՍՊ ընկերությանը «Ուրբան Լոջիստիք Սերվիսիս Տերմինալ» ՍՊ ընկերության մաքսային հսկողության տարածքում գտնվող 1755 կգ ընդհանուր քաշով խոզի բուրդը հայտարարագրել որպես ոչ ԵՏՄ անդամ երկրի ապրանք Արարատյան մաքսատուն-վարչությունում, որից հետո բաց թողնել»:

3.2. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալը 10.11.2017թ.-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՆՀՎ պետին հասցեագրել է գրություն՝ նշելով հետևյալը. «Հետագա ընթացքը օրենքով սահմանված կարգով ապահովելու նպատակով՝ Ձեզ է ուղարկվում ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետ՝ Ս. Սինանյանի 10.11.17թ. թիվ 13-2/[1525132]-17 գրությունը:

Հանձնարարվում է թույլատրել «Բրենդ Լիդեր» ՀՁ ՍՊ ընկերությանը 27.10.2017թ. 10803040/271017/0066428 տարանցման հայտարարագրով ՀՀ ներմուծված և «Ուրբան Լոջիստիք Սերվիսիս Տերմինալ» ՓԲ ընկերության մաքսային պահեստում գտնվող 1755 կգ ընդհանուր քաշով խոզի բուրդը

հայտարարագրել որպես ոչ ԵԱՏՄ անդամ երկրի ապրանք Արարարյան մաքսատն-վարչությունում, որից հետո սահմանված կարգով բաց թողնել»:

3.3. Ընկերությունը 14.12.2017թ. գանգատ է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողովին՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Ս. Ավետիքյանի կողմից 10.11.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ ՆՀՎ պետ, մ/ծ գնդապետ Գ. Մովսիսյանին և ՀՀ ԿԱ ՊԵԿ ԱՏՄ պետ, մ/ծ փոխգնդապետ Ա. Սարգսյանին ուղարկված թիվ 8-3/[1525298]-17 գրությունը և պարտավորեցնել վարչական մարմնին թույլատրել 1755 կգ ընդհանուր քաշով խոզի բուդը բաց թողնել որպես ԵԱՏՄ ապրանք:

3.4. Գանգատի քննության արդյունքում Գանգատարկման հանձնաժողովը 26.01.2018թ.-ին կայացրել է թիվ 5/4 որոշումը՝ Ընկերության գանգատը մերժելու մասին:

3.5. «ТК «Мираторг» ՍՊ ընկերության կողմից 31.10.2017թ. տեղեկատվական նամակի համաձայն, «Բրենդլիդեր» ՀԶ ՍՊ ընկերությանը 25.10.2017թ. 1499659ВД բեռնագրով ուղարկված թիվ 536439 միջազգային ապրանքատրանսպորտային բեռնագրում թույլ է տրվել վրիպակ, մասնավորապես «Окорок свиной с/м В/У ~9кг*3(~27кг) ЗАО “СК Короча” РОССИЯ (код ТНВЭД 0203295509)»-ի փոխարեն գրվել է՝ «Окорок куриный б/к н/ш с/м ВАЛ (12кг) ООО “Брянский Бройлер” РОССИЯ (код ТНВЭД 0207146009)»:

3.6. 25.10.2017թ. թիվ 1499659ВД բեռնագրում նշված են հետևյալ ապրանքները՝ «1. Крыло цыпленка-бройлера с/м ВАЛ (12кг) ООО “Брянский Бройлер” РОССИЯ, 2. Голень цыпленка-бройлера н/к н/ш с/м ВАЛ (12кг) ООО “Брянский Бройлер” РОССИЯ, 3. Филе цыпленка-бройлера б/ш с/м КОРОБ (12кг) ООО “Брянский Бройлер” РОССИЯ, 4. Окорок свиной с/м В/У ~9кг*36 (~27кг) ЗАО “СК Короча” РОССИЯ»:

3.7. 25.10.2017թ. թիվ 1499659ВД հաշիվ-ապրանքագրում նշված են հետևյալ ապրանքները՝ «1. Крыло цыпленка-бройлера с/м ВАЛ (12кг) ООО “Брянский Бройлер” РОССИЯ, 2. Голень цыпленка-бройлера н/к н/ш с/м ВАЛ (12кг) ООО “Брянский Бройлер” РОССИЯ, 3. Филе цыпленка-бройлера б/ш с/м КОРОБ (12кг) ООО “Брянский Бройлер” РОССИЯ, 4. РОССИЯ»:

3.8. Թիվ 536439 միջազգային ապրանքատրանսպորտային բեռնագրի 6-րդ կետում՝ որպես առաքվող ապրանքներ նշված են՝ «*крыло цып., голень цып., окорок цып., филе цып.*»:

4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ **բողոքը ենթակա է բավարարման** հետևյալ հիմնավորմամբ.

Սույն բողոքի քննության համար Հանձնաժողովն էական է համարում հետևյալ հարցադրումներին անդրադառնալ՝

- Գանգատարկման հանձնաժողովի կողմից իրականացվել է արդյոք Ընկերության կողմից ներկայացված բողոքի հիմքում ընկած փաստական հանգամանքների օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննություն և արդյո՞ք փորձ է արվել բացահայտել Ընկերության օգտին առկա փաստական հանգամանքները.

- համապատասխանում է արդյոք Գանգատարկման հանձնաժողովի որոշման շրջանակներում իրականացված համապատասխան իրավական նորմերի մեկնաբանությունը ՀՀ մաքսային օրենսդրության կարգավորումների իմաստին և տրամաբանությանը:

Առաջին հարցադրման առնչությամբ Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի որոշումը հիմնված չէ գործում առկա բոլոր փաստական հանգամանքների և դրանց բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննարկման վրա՝ հետևյալ հիմնավորմամբ. Գանգատարկման հանձնաժողովը՝ հիմնվելով միայն հայտարարագրման որոշ փաստաթղթերում առկա տեղեկատվության և նշվածն առանց մյուս փաստաթղթերում առկա տեղեկատվության հետ համադրելու սահմանափակվել է այն դիտարկմամբ, որ Ընկերության կողմից չի իրականացվել 1750,5 բրուտտո, 1691,62 նետտո քաշով խոզի բրդի սահմանված կարգով հայտարարագրում, որպիսի պարագայում այն չի կարող հայտարարագրվել որպես ԵՏՄ անդամ երկրի ապրանք:

Մինչդեռ սույն վարույթի շրջանակներում առկա փաստաթղթերի և փաստական հանգամանքների ուսումնասիրությունից հետևում է, որ Մատակարարի կողմից տրված թիվ 1499659BД առ 25.10.2017թ. ապրանքային բեռնագրի և անասնաբուժական թիվ RU 50 N 00028990 սերտիֆիկատի համաձայն՝ առաքման է

ենթակա եղել 21.383,62 կգ նետտո քաշով, 22.049,67 կգ բրուտտո քաշով, 2.089.269,47 ՌԴ ռուբլի հաշիվ ապրանքագրային արժեքով հավի միս և խոզի բուդ: Խոզի բդի ծավալները սահմանված են եղել 1750,5 բրուտտո, 1691,62 նետտո քաշով, որն այնուհետև փաստաթղթերում առկա բացթողնման ուժով հայտարարագրվել է որպես հավի միս՝ սակայն պահպանելով խոզի բդի համար սահմանված քաշի պայմանները:

Այն, որ հավի մսի նշումը խոզի մսի փոխարեն կատարվել է փաստաթղթերում առկա թերացման արդյունքում, հիմնավորվել է առաքումն իրականացնող «ՍՊԱՅԿԱ» ՍՊԸ-ի աշխատակից Հովհաննես Թովմասյանի նկատմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածով նախատեսված կանոնների խախտման վերաբերյալ իրականացված վարչական վարույթի նյութերով, որի շրջանակներում վարորդի նկատմամբ կիրառվել է վարչական պատասխանատվություն:

Գանգատարկման հանձնաժողովը որևէ կերպ չի անդրադարձել և գնահատման չի արժանացրել վերոհիշյալ ապացույցները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետություն ներմուծման ժամանակ առկա են եղել ապրանքի միևնույն ընդհանուր ծավալները, որոնց մեջ ներառված է եղել նաև 1750,5 բրուտտո, 1691,62 նետտո քաշով խոզի բուդը, որպիսի պարագայում բեռի նկատմամբ որևէ միջամտության վերաբերյալ փաստական հանգամանքի բացակայության պայմաններում խոզի բդի փոխարեն ըստ էության հայտարարագրված և ներմուծված է գնահատել գոյություն չունեցող ծավալով հավի միսը:

Միաժամանակ ուշադրության է արժանի այն իրողությունը, որ Գանգատարկման հանձնաժողովը գործի քննության ընթացքում չի անդրադարձել համապատասխան բեռնասրահների (հատվածամասերի) կապարակնքված լինելու, ինչպես նաև կնիքները վնասված լինել կամ չլինելու հանգամանքներին, ինչը նույնպես կարող էր էական ազդեցություն ունենալ գործի ելքի վրա:

Նշվածի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի կողմից խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջը, ինչն ուղղակիորեն ազդել է գործի ելքի վրա:

Բացի այդ, Հանձնաժողովը գտնում է, որ խոզի բդի փաստացի հայտարարագրման պարագայում Գանգատարկման հանձնաժողովի և մաքսային մարմինների կողմից խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի

մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված ձևական պահանջների չարաշահման արգելքի սկզբունքը, համաձայն որի՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Երկրորդ հարցադրման առնչությամբ Հանձնաժողովը գտնում է, որ առկա է օրենսդրական բաց, որը մեկնաբանվել է ի վնաս Բողոք բերած անձի՝ հետևյալ հիմնավորմամբ.

Մաքսային միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգրք)
4-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի համաձայն՝ **Մաքսային միության ապրանքներ**՝ Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող ապրանքներ, որոնք՝

- ամբողջությամբ արտադրվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում.

- ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք և ստացել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ՝ սույն Օրենսգրքին և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան.

- պատրաստվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում սույն ենթակետի երկրորդ և երրորդ պարբերություններում նշված ապրանքներից և (կամ) օտարերկրյա ապրանքներից և սույն Օրենսգրքին և (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան ձեռք են բերել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ:

Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ **օտարերկրյա ապրանքներ**՝ Մաքսային միության ապրանքներ չհանդիսացող ապրանքներ, ինչպես նաև ապրանքներ, որոնք սույն Օրենսգրքին համապատասխան ստացել են օտարերկրյա ապրանքների կարգավիճակ.

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի անբաժանելի մաս համարվող՝ 5-րդ հավելվածով ներկայացված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության

տարածքից Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածք Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք չհանդիսացող տարածքներով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման առանձնահատկությունների մասին **արձանագրության (այսուհետ՝ նաև Արձանագրություն) 5-րդ կետի համաձայն՝** Միության մաքսային տարածքից Միության մաքսային տարածք օտարերկրյա պետությունների տարածքներով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան տեղափոխման դեպքում Եվրասիական տնտեսական միության ապրանքները պահպանում են Եվրասիական տնտեսական միության ապրանքների կարգավիճակը:

Վերոհիշյալ կարգավորումներից հետևում է, որ ապրանքը օտարերկրյա ճանաչելու համար անհրաժեշտ է երկու պայմանների առկայություն՝

- ապրանքն ի սկզբանե չի հանդիսանում Մաքսային միության ապրանք, որը սույն գործի շրջանակներում բացակայում է, քանի որ վարույթում առկա փաստաթղթերից հետևում է, որ խոզի բուղը ծագում է Մաքսային միության անդամ պետությունից՝ Ռուսաստանի Դաշնությունից, և

- սույն Օրենսգրքին համապատասխան ստացել են օտարերկրյա ապրանքների կարգավիճակ: Նշվածի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Մաքսային միության մաքսային օրենսգրքը չի սահմանում սույն գործի հանգամանքներով պայմանավորված օտարերկրյա ապրանքների կարգավիճակ ձեռք բերելու կարգավորում, որպիսին սակայն Գանգատարկման հանձնաժողովի կողմից մեկնաբանվել է Արձանագրության 5-րդ կետի կարգավորումը:

Նշվածի առնչությամբ Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի մեկնաբանության դեպքում Արձանագրության 5-րդ կետում սահմանված «պահպանում են Եվրասիական տնտեսական միության ապրանքների կարգավիճակը» ձևակերպումը նույնացվում է «կորցնում է Եվրասիական տնտեսական միության ապրանքների կարգավիճակը» կամ «ստանում է օտարերկրյա ապրանքների կարգավիճակ» ձևակերպումներին, որոնք սակայն նույնական չեն և հանդես են գալիս ի վնաս տնտեսավարողի կատարված մեկնաբանություն:

Որպես նշված դիրքորոշման հիմնավորում Հանձնաժողովը դիտարկում է նաև Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով¹ առաջարկվող կարգավորումները, մասնավորապես՝ դրա 307-րդ հոդվածը հստակ սահմանում է այն դեպքերը, որոնց վրա հասնելու դեպքում «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները կորցնում են Միության ապրանքների կարգավիճակը և Միության մաքսային տարածք ներմուծելիս դիտարկվում են որպես օտարերկրյա ապրանքներ: Ըստ նշված հոդվածի 3-րդ մասի՝ այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին կետում նշված գործողությունները, մասնավորապես՝ տրանսպորտի մի տեսակի տրանսպորտային միջոցից տրանսպորտի մեկ այլ տեսակի տրանսպորտային միջոցի վրա ապրանքների փոխաբեռնումը (վերաբեռնում), տրանսպորտային միջոցների բեռնասրահների (հատվածամասերի) վրա զետեղված մաքսային կապարակնիքներն ու կնիքները հեռացնելը կամ տրանսպորտային (փոխադրման) և առևտրային փաստաթղթերը փոխարինելը, կատարվել են առանց ուղարկող մաքսային մարմնի թույլտվության, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները կորցնում են Միության ապրանքների կարգավիճակը և Միության մաքսային տարածք ներմուծելիս դիտարկվում են որպես օտարերկրյա ապրանքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այս գործողություններն իրականացվում են վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, ինչը հաստատվում է Միության անդամ չհանդիսացող պետության համապատասխան իրավասու մարմինների փաստաթղթերով:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ առկա են Գանգատարկման հանձնաժողովի 2018թ. հունվարի 26-ի թիվ 5/4 որոշումն անվավեր ճանաչելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերով սահմանված հիմքերը:

Նույն օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքերն են սույն օրենքի 63-64-րդ հոդվածներով սահմանված հիմքերը:

¹ («Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրը վավերացնելու մասին» ՀՀ թիվ ՀՕ-221-Ն օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ վավերացնել 2017 թվականի ապրիլի 11-ին Մոսկվայում ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրը)

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, 76-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Բրենդիդեր» ՀՁ ՍՊ ընկերության 13.02.2018թ.-ի վարչական բողոքը բավարարել. բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 2018թ. հունվարի 26-ի թիվ 5/4 որոշումը և փոփոխել այն հետևյալ բովանդակությամբ. *«Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Ս. Ավետիքյանի 10.11.2017թ. թիվ 8-3/[1525298]-17 գրությունը որպես վարչական ակտ՝ Ընկերությանը Մաքսային հսկողության տարածքում գտնվող 1755 կգ ընդհանուր քաշով խոզի բուրդ որպես ոչ ԵՏՄ անդամ երկրի ապրանք հայտարարագրելու թույլտվության վերաբերյալ և պարտավորեցնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին թույլատրել 1755 կգ ընդհանուր քաշով խոզի բրդի հայտարարագրումը և բաց թողնումը որպես Մաքսային միության ապրանք»:*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ